

# ԼԻՈՆԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՆԴԵՍՆ



Լիոնի աշխարհահանդէսն ապրիլ 29ին բացաւ իւր զոնները, իսկ իւր աշխատութիւնք և զետեղմունք բոլորովին վերջանալու համար դեռ բաւական շարաթիւնք ալլ անցան։ Եւ հուսկ ուրեմն յունիսի սկիզբն ամենայն ինչ կազմ և պատրաստ էր, և այցելուք կրցան տեսնել և զարմանալ նորա ամբողջութեան և մանր բաժանմանց վերայ։

Աշխարհահանդէսն զետեղուած է Ոսկէգլխոյ (Tête-d'Or) հրաշալի ցանկապատ պարտիզին մէջ, որոյ ընդարձակութիւնն հարիւրակալէն (hectare) պակաս չէ, և ապահովապէս ֆաղդիոյ ամենէն զեղեցիկ վայրերէն մին է։ Թիբաւի սքանչելիք մ'է Ոսկէգլխոյ հրաշագեղ լճին համաստեիլ պատկերն իւր շուրջակայ կղզիներով և հարիւրամայ ահագին ծառերով։ Եւ այսինքն կանգնուած են մարգագետիններու և բազմատեսակ տրնկոց մէջ, որոց տերեւալից ոստերն կանաչագարգ են, ծիրանեղոյն կամ երփնագեղ։

Աշխարհահանդիսի գլխաւոր պալատն եղաւ կան ձեւ մի կը ներկայացնէ իւր ահագին տարածութեամբքն։ Այցելուն այս հոյակապ շէնքիս ահագին գմբէթին մէջ մտնելով՝ կը զարմանայ այս վիթխարի մետաղեայ կազմածքի ճարտարութեան և շինուածքի ոճոյն վերայ։

Այս երկաթեայ և ապակեղէն պալատի բաւանդակութիւնն՝ երկու տարբեր մասեր ունի։ Գմբէթն և մանեկաձեւ մասն՝ որ կազմուած է հաւասարակշիռ գերաններ կրող երկու կարգ ցիցերով։

Միջին գմբէթն կը ծածկէ 110 մետր տրամագծով մակերեսայթ մի։ Նա զնգաձեւ չէ՝ այլ զուգորդական ձեւ մ'ունի, և կը բաղկանայ 16 կիսաղեղներէ՝ որք կը հանգ-



չին 1 մետր տրամագծով ձուլուածոյ լիսեռաց վերայ, և իրենց զագաթն պսակ մ'ունին 5 մետր տրամագծով և 1, 8 մետր բարձրութեամբ։

Այս աղեղաց նետն 10 մետր է, և հաստաւուած են 1, 20 առ 1, 80 բարձրութեամբ արկղներով (caisson), 80 հարիւրորդամետր լայն հեծաններու վերայ, և հաստաւաններով (montant) ու երկաթներով ամրացած են երկու կողմանց վերայ Ս ձեւով 0, 7 մետրի։ Վերին պսակն գետնէն 55 մետր բարձր է։ Աղեղներն միմեանց հետ կապակցութիւն չունենալով՝ առանձին կը ձեւանան։ Տրուած ոյժ մը կրելու և բաշխելու չափ հոստ չեն երեկր աղեղներն, և ահա յայտ մի կ'է այս շէնքիս հետաքրքրական կէտերէն մին։ Այս աղեղներս շինուած են երկաթի հեծաններով՝ ձեղունին երկաթի ծանրութիւնը վերցրնելու համար իր կամարներով և ծպեղներով մէկտեղ, որոց կշիռն է 40 հազարազրամ առ մետր տարածեալ։

Լիոնի աշխարհահանդիսին մեծ գմբէթն կը ծածկէ 45, 751 քառակուսի մետրով մակերեսայթ մի, և իւր արտաքին կազմածին տրամագիծն է 232 մետր։ յիբաւի հրաշալի շինուած մ'է այս։ Աշխարհահանդիսի ամբողջութիւնն կերպով մը բովանդակուած է այս պալատիս ընդարձակ սրահին մէջ, ուր զետեղուած են պատուհանաց երփնագարդ ապակիքն՝ բոլորաձեւ սրահներ կազմելու համար։ Ընդարձակ գմբէթին ներքեւ կը նշմարուին բազմաթիւ հրաշալի իրեր։ ամենէն առաջ ի անե զրուած են Լիոնի մետաքսեղէնք, որք և ճարտար արուեստի մը հրաշալի արդատեաց տեսարան մի կ'ընծայեն այցելուին աչաց։ Ինչպէս որ արդէն բոխնք Ոսկէգլխոյ ցանկապատ պարտիզին մէջ զետե-

դուած է աշխարհաճանգիսին ամբողջութիւնը :  
Մեծ գմբէթն խիստ լաւ և վայելուչ դիրք  
բռնած է : Ըստ ճարտարապետական տեսա-

կիտի՝ յիշուի շատ նշանաւոր են Ճէզայիրի,  
Տունուաի, Աննամի և Հնդկաշինու պալատ-  
ներն, ինչպէս որ կը ցուցընեն 2, 3 և 4



1. — Լիոնի աշխարհահանգիսին համապատկերն : 2. — Պալատ Ճէզայիրի : 3. —  
Պալատ Տունուաի : 4. — Պալատ Հնդկաշինու :

պատկերներն. որոց մէջ բովանդակուածն այլ ներուս մէջ կան Գազդիյի գաղթականաց երկ-  
նուազ հետաքննականք չեն : Այս պալատ-  
րին բոլոր բնական բերքերն, և նոցա բնակչաց

արուեստի և ճարտարութեան օրինակներն : Սոցա այցելութիւն մ'ընելն մեծապէս հրաւանդել է օգտակար է : Մեր 1 նկարն կը ներկայացնէ Ոսկէգլխոյ ցանկապատ պարտիզին համատեսիլ պատկեր մը, հանդերձ հոյակապ շէնքերով՝ զորս իւր մէջ կ'ամփոփէ այժմ : Երազգորդն ամբողջութեան տեսչեան ներքեւ ներկայացուցած է Ճէզայրիի, Տունուսի և Հնդկաչինու պալատները : Այս պալատներո շատ ճաշակով կառուցուած են ըստ ոճոյ ճարտարապետութեան այն երկիրներուն՝ ուրոց արտադրութիւնը կը բովանդակեն իրենց մէջ : Սոցա գեղեցկապէս կառուցուած են ի շուրջակայս լճին՝ ուրիշ հետ մարգագետիններէն, և հովանաւորուած են խիտ առ խիտ ծառերէն :

Փափաքողն կրնայ երթալ հոն թէ ոտքով և թէ նստակով ընէն տնցնելով : Աղուոր շրջագայութիւն մ'է այս : Չէ սակաւ հետաքրքրական՝ հայեացք մի ձգել գեղարուեստից, երկրագործութեան, լիոն քաղքին ազատական արուեստից և կրօնական ու ազատական արուեստից պալատներու վերայ, ինչպէս նաև բանուորաց, չուրց և անտառաց աշխարհահանդիսին վերայ : Հոն գտուող ճոխ և յարուս հաւաքմանց իւրաքանչիւրն զատ զատ առանձին շէնքի մը մէջ դրուած է, որպէս զի աւելի եւս լաւ ուսումնասիրուի :

Ոսկէգլխոյ ցանկապատ պարտիզին մէջ կան բազմաթիւ զբօսեցուցիչ հաւաքմունք՝ որք ախորժելի սթափում մի կը բերեն սոցեւելաց վերայ :

Ի ցոյց դրուած են նաև 100 էն աւելի խափշկներ Սենեզալի, Սուդանի և Դահոմէի : Անկէ սակաւ մի հետու կը գտուի Տոմբուկուտի (ի Դահոմէյ) երկաթադիւն . մեր խօսքն նորօրինակ մեքենական խաղի մը մասն է : Ծանապարհորդները կը տանի փայտեղէն փիղ մի, ուղտ մի և եղջերաւոր ընձուղտ մի, որք կը սահին բոլորածնեւ երկաթեայ հետոց վերայ :

Յիշենք հոս Գիշերային պատերազմին համատեսիլ պատկերը՝ յորում կը տեսնուի Բելժոնտի շարժուն պահապան զօրաց մուտքն ի լիոն : Յիրաւի սքանչելի գործ մ'է այս երևելի և համակերելի արհեստաւորին Պ. Պուալպուտի :

Նշանաւոր է նաև պարտիզագործութեան աշխարհահանդէսն՝ որ 4 հարիւրակալ է և երկու պարտիզաց բաժնուած, որոց մին տրնկուած է զաղդիական ոճով, իսկ միւսն խառն ոճով :

Հուսկ ուրեմն յիշենք նաև Պ. Շալաբրի շինած էպուկապ օդապարիկն (ballon captif), որոյ նաւակատեաց հանդէսն լի յալողութեամբ կատարուեցաւ մայիս 9ին ի ներկայութեան գլխաւորաց քաղաքին : Այս օդապարիկն՝ որ իւր տարածութեամբքն կը յիշեցնէ Արիստան դաշտի և Տրոկադերոյի ի մէջ 1889ին կատարուած աշխարհահանդէսը՝ 3200 խորանարդ մետր է, և շինուած է Չինու առաջնակարգ կերպասէն, և որոյ վերին կարճաբերձ կամարին համար ունեցած կարծրութիւնն քառակուսի մետրով 2000 հաւաքարգրամէն աւելի կու զայ. մինչդեռ միւս մասերն 1200 էն մինչև 1400 հաւաքարգրամ կարծրութիւն մ'ունին :

Ջնարակի եօթն խաւերով (couche) ծեփուած կերպասն կը ներկայացնէ մի կատարեալ ջրախից : Էպուկապ օդապարիկն ամուր կերպով գոցուած է վերին կափարչով մի՝ որ զինքը անձրևէն կը պատապարէ. ուրիշ կափարիչ մ'այլ կայ վարի կողմով որ կապի ճնշմամբ ինքնաբերական կերպով երբացուի : Օդապարիկի ստորին կողմը կը զբօսուի նաև 500 մետր խորանարդով համակշիռ զընտիկ (ballonnet) մը՝ որ երկու ինքնաշարժ կափարիչներով ամրացած է :

Նշանաւոր իմանքի շինուած ցանցակերպ հիւսուածն 24000 աչքէ (օղ) պակաս չէ : Բոլորածն օդանաւն՝ որ 2, 60 տրամագիծ մ'ունի, հասարակ մետաքսի պատուած է, և կրնայ 16 հոգի ընդունիլ իւր մէջ ամենայն հանգստութեամբ : Պարանի երկայնութիւնն է 400 մետր, կը կրնայ 9 էն մինչև 10000 հաւաքարգրամ ծանրութիւն վերցընել, և կը պլլուի շոգեշարժ պանի մի վերայ՝ 20 ձիու զօրութիւն ունեցող կրկնազան մեքենայով մը :

Օդապարիկն լեցուած է զուտ ջրածնով, ըստ գլուխեան Գիփարդի, ժամուան մէջ 150 մետր խորանարդ ճնշում յառաջ բերելով : Առաջին ուսուցման համար գործածուած էր

25000 հազարադրամ ծծմբական թթուում  
և 10000 հազարադրամ երկաթի քաղաղում  
թիւն :

Վերելքն այն ժամանակ տեղի կ'ունենայ  
երբ օդն լաւ է. առաւօտեան ժամը 9էն  
մինչեւ երեկոյեան ժամը 11 : Օդաջնացա-  
կան բնդարձակ պարտէզն յերեկոյին կը լու-  
սաւորուի վեց աղեղնաձեւ լապտերներով :

Չորաւոր լուսարձակ մի իւր ճառագայթնե-

րը կը սփռէ նշուկապ օդապարիկին վերայ՝ որ  
լուսեղէն գունդ մի կը դառնայ : Լուսանկար-  
չական ընկերութիւն մի հաստատուած է՝ իւ-  
րաքանչիւր ճամբորդութիւնի լուսանկարելու  
համար :

Լիոնի աշխարհահանդէսն մեծ և նշանաւոր  
գործ մ'է որոյ այցելութիւնն այլ շատ հետա-  
քննական : Յիշատի զայն պատրաստողք ար-  
ժանի են բարեմաղթութեանց :

## Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

### ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՒՕՍՈՒԹԵԱՆ

Ի ԶՈՐՐՈՐԴ ԴԱՐՈՒ

(Ըստ Վիլհէմի)



որորդ զարն նախկին եկեղեցւոյ  
մեծ յեղանակ և միանգամայն քրիս-  
տոնէական գրականութեան ոսկեգարն  
է : Այս յեղանակիւ մէջ եկեղեցին  
ընկերական օրինօք հաստատեալ քա-  
ղաքային տէրութիւն մի կը դառնայ, այն  
ատեն ի պերճախօսութեան և ի դպրութեան  
յառաջ կը բերէ այն վեժմ և պայծառ հան-  
ճարները, որոց ոչ երբեք նման մրցակիցք կը  
գտուին՝ բայց եթէ Գաղղիոյ ժի. դարու  
սրբազան քարոզչաց մէջ : Ո՛րչափ արդարեւ  
մեծամեծ մարկիկ, ո՛րքան գերազդէն ճար-  
տասանք կ'ենէն Ս. Սթանստէն մինչեւ Ս.  
Ալգոտինեայ ժամանակն, ի՛նչ հրաշազօր  
մատարական շարժմունք բովանդակ հռոմէա-  
կան աշխարհին մէջ, ի՛նչ տաղանդներ՝ նե-  
րախօհ մրցմանց մէջ հանդիսացեալ, ինչպիսի՛  
ոյժ մարդկան հաւատոց վերայ բանեցուցած,  
ի՛նչ կերպարանափոխութիւն բովանդակ ըն-  
կերութեան, այն կրօնից ձայնիւ որ ի գեա-  
նադամբանաց կը վերանայ ի գահոյս կայսե-  
րաց, որ ըստ կամս իւր ի գործ ամէ երբեմն  
մարտիրոսաց արեամբ մաշեցուցած սուրբ :

Արդի ժամանակներու և մանաւանդ Գաղ-  
միոյ ժի. դարուն մէջ, քրիստոնէութիւնն  
կերպով մի քաղաքականութիւնէն օգնութիւն  
կը գտնէր, նորա հետ կը մաքրազարդէր  
որով և նոյն պայծառութեամբ կը փալփէր  
ինչպէս արուեստը : Ժի. դարու մեր պեր-  
ճախօսքն զիրենք շրջապատող հանճարներէն  
կ'օգտուին և կը ներշնչին : Նորա իրենց լե-  
զուին մէջ կը ցուցունեն այն շքեղութեան  
և քաղաքակրթութեան պայծառութիւնը, զոր  
կը պախարակին յապարանս Լուդուիկեայ  
ժ. Գ. ի. նորա զնոյն երբեմն զանձամբ կը  
զգենուն և երբեմն կը շլատան : Եթէ Բոսիւ  
իւր մեծութեամբ և աշխուժին գերազանց  
ոմն է, այլ և քաջայայտ է ամենուն՝ թէ  
ինքն եւս իւր ժամանակցաց հետ մի և նոյն  
մատնութիւններով սներ ու աճեր է, և թէ  
ինքն եւս մի և նոյն յեղանակի այլ երկնիկ  
բեղմնաւորութեան պտուղ մ'է :

Սակայն Դ. դարու մէջ, որչափ որ այլն  
ամենայն կը փճանայ՝ թուի թէ քրիստոնէա-  
կան պերճախօսութիւնն կ'աճի և կը զօրա-  
նայ : Այս մտաց և արիւթեան ամենէն ա-